


Wt. t₂nd a.
Այսքանի պա-
րտիվություն:



ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԵՐՈՒԹՅԻՆ № 17

ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ


1999

Ն. ՏԵԼԵԶՈՎ

ՍՊԻՏԱԿ ՏԱՐԵՂՆԻԿԸ



Խայթոջ Վեցանգուստ Ստիլոց Ա



ՊԱՏԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ



Փոխ. օր. Ե. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅԱՅ ՀՐԱՏԱՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ № 17


ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Ն. ՏԵԼԵԶՈՎ

ՍՊԻՏԱԿ ՏԱՐԵՂՆԻԿԸ

ՊԱՑԿԵՐԱՋԱՐԻ ՀԿՔԵԱԹ

ՏԵԼԵԶՈՎ



Փոխադրեց Օր. Ն. ԳՐԻԳՈՐԵԱՆ



Թ Ի Ֆ Լ Ի Զ
Տպարան Ն. Աղամեսանի, Պոլից. 7
1913

4 2010-60

38 2017

Ա Ա Պ Ա Թ Ա Բ Ա Մ

ԹԱԳՈՒՀԻ ԳԱԲՐԻԵԼԵԱՆ

Ա Բ Ե Տ Ե Ա Ն Ի

ԱՆՄՈԽԱՅ ՅԻՇԱՑԵԿԻՆ


Ն Ա Կ Ե Ը

ՓՈԽԱԴՐՈՂԻՑ

ՍՊԻՏԱԿ ՏԱՌԵՂՆԻԿԸ

Հ Ե Ք Ե Ա. Թ.

Ա



Եր կողմերից շատ դէնը, հեռու, ցուրտ հիւսիսում, սառը ովկիանոսի մէջտեղը մենումենակ մի կղզի կարմի փոքրիկ թագաւորութիւն:

Կղզին ինչպէս-որ մշտապէս ջրով էր շրջապատուած, այնպէս էլ համարեա տա-

րին-տասներկու ամիս պատած էր լինում մէգ ու մառախուղով, որոնք շատ քիչ անգամ էին երկնքի երեսը ցոյց տալիս կղզու բնակիչներին:

Այդ մէգ ու մառախուղը մին թանձրանում էին, մին նօսրանում, բայց երբէք չէին պակասում:

Կղզում ձմեռը անչափ երկարատև էր լինում, իսկ ամառը կարճատև:

Կղզու անհամբոյր վիթխարի ապառաժները միայն մի կարճ միջոց էին զարդարվում սպիտակաւոն մամուռով ու էլի ծածկվում սպիտակ ձիւնով:

Ճիշտ է, այդ փոքրիկ թագաւորութեան մէջ կա-

նանչ, ծառ ու ծաղիկ շատ քիչ էր լինում, բայց չնայելով այդ բանին, կղզու բնակիչները սրտանց սիրում էին իրանց՝ բուսականութեամբ աղքատ հայրենիքը, ուր ծնուել ու մնուել էին և մեծացել նրա օդ ու ջրով, ուր հանգչում էին իրանց նախնիքների ոսկորները:

Բայց այդ կղզու բնակիչները ոչ-միայն սիրում էին իրանց հայրենիքը, այլև պաշտում. նրանք սիրում էին նոյնիսկ նրան շրջատառղ մոայլ ծովը, նրանում բարձրացող վիթխարի ու ամենի ժայռերը. սիրում էին նրա ամեն տեսակ կեանքը՝ թէ ուրախութիւնը, թէ տիրութիւնը. նրանում կատարուած ամեն մի եղելութեան կամ տեղի ունեցող ամեն մի երևոյթի մասին առանձին հաճոյքով էին պատմում միմեանց և հրճուանքով էլ լսում ուրիշներից:

Կղզու բնակիչները իրանց դաշտերի աղքատ բուսականութեամբ ու գունատ ծաղիկներով աւելի էին ուրախանում, բան հարաւի ժողովուրդները՝ իրանց դաշտու մարգագետինների բազմերանդ ծաղիկներով ու փարթամ բուսականութեամբ:

Կղզու բնակիչների բաղդից նրանց թագաւորը կատարեալ հոգատար հայր էր և հարազատ հօր պէս էր միշտ մասնակից էր լինում նրանց թէ ուրախութեանը և թէ տիրութեանը:

Հէնց-որ գալիս էր գարունը և կենսատու արևն ըսկում էր փայփայել ու տաքացնել գետինը, թագաւորը իրա ժողովրդի համար մի հսկայական ու խիստ շքեղ հանդէս էր սարքում, որի համար նախապատրաստութիւններ էին տեսնում գեռ աշունքուանից:

Ժողովուրդը՝ երկարատև ձմռան ընթացքում անհամբերութեամբ էր սպասում այդ օրուան:

Այդ ազգային հանդէսին սովորաբար հիւր էին գալիս դրացի երկիրներից արքայազուններ, թագաւորազ-

ներ, իշխաններ ու շատ անուանի մարդիկ:

Տեղացինների պէս օտարները ևս սրտանց սիրում ու յարգում էին ծերունի թագաւորին՝ նրա բնական առողջ խելքի և վերին աստիճանի բարի սրտի տէր լինելու համար:

Արքայազուն հիւրերն աշխատում էին նրանից սովորել ժողովրդին կառավարելու ձեր, որպէսզի ապագայում իրանք ևս ծերունի թագաւորի նման սիրուած ու յարգուած լինէին իրանց հպատակներից: Նրանք պարզ տեսնում էին որ չնայած կղզում տիրող ձմռան անտանելի երկարատևութեան և թէ նրա աղքատ բնութեան, բայցևայնպէս ժողովուրդը ոչ-միայն շատ չէր նեղվում, այլ համարեա զոհ ու երջանիկ էր զգում իրան:

Ծերունի թագաւորը մի աղջիկ ունէր, անունն իգուդ:


Աղջիկը ևս հօր նման բարի սրտի տէր էր ու հրեշտակի նման էլ սիրուն: Նա ուրիշ արքայազնունինների պէս իրա օրը անգործութեամբ չէր անցկացնում, կամ դատարկ արգուզարդերով զբաղվում, այլ ամեն օր՝ առաւօտից մինչև երեկոյ այն հոգսի մէջ էր լինում, թէ ինչպէս անէ որ հնար ունենայ ճիշտ ժամանակին օգնութիւն հասցնել բոլոր կարիքաւորներին և հարկաւոր գեղ ու դարմանը տանել հիւանդներին:

Եւ բարեսիրտ աղջիկը այդ ամենը կատարում էր այնպէս քնքօրէն, այնպէս անկեղծ ու սրտանց, որ միայն նրա երկալը բաւական էր լինում չքաւորներին ուրախութիւն պատճառելու, իսկ հիւանդներին՝ թեթևութիւն զգալու իրանց ցաւերից:

Եւ հայրը խրախուսում էր իղոլդի այդ ձգտումը: Նա ասում էր աղջկան:

— Հէնց զթասրտութիւնն է մարդուս երջանկու-

թիւնը, և եթէ մենք անգութ լինինք դէպի ուրիշները,
մեր բաղդն էլ մեզ կը դաւաճանի:




ննկատելի կերպով
շուտ անցաւ ուրախ
ամառ:

Սառը ծովը կրկին մռայլ ու ամայի դարձաւ. նա
գորշագոյն պողպատի նման ծանր երերվում էր փչող
ցուրտ քամուց, վայր ու վեր անում՝ բարձրանում—լեռ-
նանում, ապա իջնելով՝ ահազին ու ահոելի անդունդ-
ներ կազմում, կամ տակնուվրայ լինելով՝ աղմկում,
մռնչում և մէկէլյանկարծ հանդարտվում, բայց էլի շա-
շում ու շառաչում և լողացող սառուցի կտորները զար-
նելով իրար՝ աններդաշնակ ձայներ հանում, ոռնում
և էլի նորից լռում—պապանձվում....

Սակայն անհրապոյր հիւսիսի այդ ծովը՝ հանդարտ
լինէր թէ ալէկոծ, միշտ միենոյնն էր. նա ամենքի համար
միատեսակ անհաշտ էր, միատեսակ դաժան ու կատաղի.

Արեգակն այլևս չէր երևում մոխրագոյն ամպերի մի-
ջից. Թանձր մառախուղը՝ լերկ ժայռի վրայից կրկին
սկսեց սահել ու գանդաղօրէն տարածուել կղզու վրայ:

Ամեն տեղ տիրեց խորին լռութիւն:
Հաստւ տաղտկալի երկարատև ձմեռը:
Իգոլգը ամեն օր՝ մտածմունքի մէջ ընկղմուած,



Իգոլգի հօր պալաօք.

մօտենում էր պալատի մեծ ու բարձր լուսամտին, որտեղից պարզ երևում էր սառած ու ձիւնածածկ ծովը, որ կարծես մի հսկայական մոխրագոյն շերտով միացած լինէր երկնքի հետ:

Եւ երկուսն էլ մռայլ էին, երկուսն էլ կատաղի:

Իզոլդը երկար ժամանակ մնում էր կանգնած լուսամտի առաջ. նա մտաբերում էր անցած ամառը և ինքնիրան հարց տալիս.

«Հիմա ՞ւր են այն սիրուն ծաղիկները, որոնցով զարդարում էի կուրծքս ու վարսերս. ՞ւր են՝ այն թարմ, ակնապարար կանանչը, այն տաք ու պայծառ գիշերները, երբ ամեն կողմից գարնանային ուրախ երգեր էին հնչվում...: Դաժան ձմեռը ամեն բան տարաւ հետն ու անհետ արաւ»....

Ծերունի արքան՝ երբ տեսնում էր աղջկան տխուր ու մտախոհ կանգնած լուսամտի առաջ, մօտենում էր, հայրական գորովանքով շոյում նրա սիրուն գլուխն ու հարցնում.

—Միրելիս, ինչի՞ մասին ես մտածում այդպէս...: Ասա, հոգիս. ինչու ես շարունակ ծովին նայում:

—Մեր ծովը շատ կատաղի է, հայրիկ, —պատասխանում էր իզոլդը. —Նա շատ նաւեր է կլանել: Ես մտածում եմ մեր այն հիւրերի մասին, որոնք գալով մեզ մօտ, այլև չեն մտածում ժամանակին վերադառնալ իրանց երկիրը և միշտ ուշանում են...: Ես շատ եմ վախենում թագաւորազն Սագիրի համար:

—Մի վախենար, հոգիս, —ասում է հայրը. —Նշանածդ արդէն վտանգն անցկացրած կը լինի: Նրա նաւը առաջնակարգ նաւերիցն է. հաւանական է որ հիմա նատեղ լինի հասած...: Սակայն, սիրելի իզոլդ, գիտե՞մ՝ ինչ հրաշալի երկիր է նշանածիդ ծննդավայրը. եթէ իմանայիր...:

Եւ հայրը՝ աղջկայ տխուր մտքերը փարատելու

համար, սկսում էր պատմել հարաւային ծովի գեղեցկութիւնների և մանաւանդ իշխան Սագիրի ծննդավայրի մասին, բայց այնպէս վառ, այնպէս պայծառ գոյներով, որ իզոլդը՝ հրապուրուած այդ պատմութիւններով, մոռանում էր թախիծը և կրկին դառնում նախկին ուրախ, զուարթ, ժպտուն, ծիծաթկոտ ու անհոգ թոչնակը:

Հայրը՝ գոհ իրանից որ կարողացաւ աղջկայ տխուր մտքերը փարատել, աւելացնում էր.

—Ճիշտ է մեր ձմեռը երկարատես է, բայց յաւիտենական չէ, սիրելիս: Աստծով ձմեռը շուտ կ'անցնի, կը մօտենայ գարնան տօնը. թագաւորազունները նորից հիւր կը գան մեզ, որոնց հետ կը լինի նաև նշանածդ: Նա էլի հետը կը բերի քեզ համար իրանց երկրի բարիքներից՝ և քաղցրահամ պտուղներ, և անուշաբոյր սիրուն-սիրուն ծաղիկներ, և թանկագին քարեր: Եւ մենք էլ մի այնպիսի հարսանիք կ'անենք՝ միացնելով ազգային տօնախմբութեան հետ, որ իմ թագաւորութեան մէջ միշտ հաճութեամբ յիշուի այդ օրը...: Քո հարսանիքին ամենքը՝ մեծ թէ փոքր, լիուլի բաւականութիւն պէտք է ստանան:

Սի պարզնկայ լուսնեակ գիշեր էր:

Իզոլդը՝ երբ մօտեցաւ լուսամտին, մնաց հիացած ձիւնէ սաւանի մէջ փաթաթուած բնութեան գեղեցկութեան վրայ:

Լուսնի կաթնագոյն շողերից ձիւնը փայլում ու լոյս էր սիրում ամեն կողմը:


Ցերեկուայ նման պարզ նկատելի էր ամեն մի առարկայ:

Սաստիկ սառնամանիքից դանազան նկարէն ձևեր, սիրուն-սիրուն ոստիկ ու աստղիկներ և ամենանուրբ

սլաքներ էին ձևակերպուած լուսամտի ապակիների վրայ։
Սյդ հիանալի տեսարանից յափշտակուած իզոլդը
նայում էր, նայում ու չէր կշտանում, այնքան հրա-
շալի էին բնութեան այդ զարմանալի խաղերը։

Բնութեան այդ գեղեցկութիւններից տարուած
իզոլդը սկսեց ուրախ-ուրախ խօսել ինքնիրան հետ։

«Հարսանիքիս այնպիսի զգեստ կը հագնեմ, ինչպէս-
որ հայրենիքիս բնութիւնն է. վերնազգեստս կը լինի
այնպէս սպիտակ, ինչպէս-որ մեր դաշտերի անապա-
կան ձիւնն է. թիկնոցս մեր ծովի նման կապտագոյն կը
լինի, իսկ գլխազարդս՝ հիւսուած այնպիսի բարակ ու
նուրբ թելերից, որ նմանուի սառնամանիքից գոյացած
այս գեղեցիկ նկարներին, և սրանց նման էլ այնպէս
փայլի ու շողողայ, ինչպէս-որ պարզնկայ լուսնեակ
գիշերը նոր եկած ձիւնի թերթեփներն են փայլում ու
փելքստին տալիս լուսնի շողերի տակ»։



Խւս օրը իզոլդը կան-
չել տուաւ պալատա-
կան դերձակուհուն և
պատմեց նրան, թէ
ինքն ինչպիսի հա-
գուստ կը փափագէր ունենալ հարսանիքին։

Թագաւորի աղջկայ պատուէրների մեծ մասը շատ

շուտ և համարեա իսկութեամբ կատարեց դերձակու-
հին, որի կարած վերնազգեստն այնպէս մաքուր սպի-
տակ էր, որ նոր եկած ձիւնից չէր տարբերվում։
Թիկնոցի գոյնը իսկեւսկ ծովի գոյնն էր յիշեցնում։

Սակայն դերձակուհին այդ երկու բանը որքան
հեղտութեամբ էր գլուխ բերել, այնքան էլ դժուարու-
թեան էր հանդիպել գլխազարդը շինելիս. ոչ մի կերպ
չէր յաջողուել այնպէս պատրաստել գլխազարդը, որ նա-
նմանուէր սառնամանիքից գոյացած սիրուն աստղիկ-
ներին ու բարակ սլաքներին։

Ոչ-ոք չէր կարողանում գլխի ընկնել թէ ինչից և
ինչպէս պէտք է պատրաստել մի այդպիսի գլխազարդ։

Մարդիկ ուղարկեցին ամեն կողմը կոչ անելու՝ մեծ
վարձատրութիւն խոստանալով այն մարդուն, ով կարո-
ղանար այդ գարդը պատրաստել իզոլդի ուղածին պէս։

Ո՞չ-ոք արձագանք չտուաւ այդ կոչին. ոչ-ոք չկա-
րողացաւ գոնէ մօտաւորապէս մի այդպիսի բան հնարել։

Վերջապէս մի օր պալատ եկաւ՝ շատ տեղեր ման-
եկած, շատ չար ու բարի տեսած մի ծերունի։ Սա-
յայտնեց որ ինքը կարող է ձեռք բերել այդ զարդը, ե-
թէ ժամանակ տան իրան։

— Այստեղից շատ հեռու հարաւում, մի մեծ գետի
ափին, — ասաց ծերունին, — անթիւ ու անհամար բանա-
կութեամբ սպիտակ տառեղներ են ապրում բոլորովին
ազատ ու ապահով։ Եւ որովհետև այդ թոշունների մի-
ու ուտելու համար անպէտք է, այդ պատճառով ոչ-ոք
նրանց ձեռքը չի տալիս։ Ամեն տարի գարնան սկզբին
այդ թոշունների լերկ գլխի վրայ աղուամազ է բուս-
նում, որ կարճ միջոցում դառնում է մի սիրուն, բար-
ձըր, երկարաւոն ու շատ քնքուշ փնջիկ։ Ահա այդ փըն-
ջիկի փետուրները այնպէս նուրբ ու բարակ են, ինչպէս
որ շաղ-գնացող շերամի որդան առաջին շողինքը։ Պէտք

Է շտապել, որովհետև այնտեղ, ուր ապրում են այդ թռչունները, գարունը շատ շուտ է սկսվում։ Եթէ հիմա, առանց ուշանալու, անմիջապէս ձանապարհ ընկնեմ, ճիշտ գարնան սկզբին այնտեղ կը լինիմ։ Երբ...

Իզոլդը՝ որ հետաքրքրութիւնից փայլուն աչքերով ու ամենայն ուշադրութեամբ լսում էր ծերունուն, իսկոյն ընդհատեց նրան, բացականչելով.

—Ուրեմն շնորհած, առանց ըոպէ կորցնելու իսկոյն ձանապարհ ընկիր։

—Երբ ձեռք բերեմ այդ փետուրէ չնաշխարհիկ փընջիկը, —ընդհատուած խօսքը շարունակեց ծերունին, —և վրան ամրացնել տամ մանրիկ-մանրիկ ադամանդներ, ահա միայն այն-ժամանակ կըստացուի իսկեիսկ այն գարդը, ինչ որ պատկերացնում է իրան մեր բարի իշխանուհին։

—Սակայն ի՞նչպէս պէտք է ձեռք բերես այդ չնաշխարհիկ փնջիկը, —հարցնում է ուրախուհիացած իզոլդը։

—Շատ պարզ կերպով, —ասում է ծերունին և իզոլդի ականջին շշնջում։ —Դրա համար հարկաւոր կը լինի միայն մի հատ սպիտակ տառեղնիկ՝ սպանել։

—Ծպանել… սարսափահար բացականչեց իզոլդը և գլխով բացասական նշան արաւ, տիսուր հառաչեց ու կամաց, հազիւ լսելի ձայնով արտասանեց։

—Ո՛չ, ո՛չ, պէտք չէ այդպիսի գնով ձեռք բերած գարդը…։ Այն, ինձ հարկաւոր չէ այն գարդը, որ պէտք է թաթախուած լինի անմեղ արիւնով։ Գնա, հարկաւոր չէ, ասում եմ։

Ծերունին գլուխ տուաւ ու հեռացաւ։
Իզոլդն ամբողջ գիշեր աչքը չկպցրեց։
Խիղճն ասում էր.

«Եթէ համաձայնես»՝ թէ անազնիւ ու անխիղճ բան արած կը լինիս և թէ վիրաւորած ծնողիդ քնքուշ

ու բարի սիրտը։ Զէ-որ նա անչափ շատ է հաւատում քեզ և վստահ է քո խոհեմութեան վրայ։ Եթէ ձեռք էլ բերես, նա անպատճառ կարգելէ քեզ վրադ կրելու մի զարդ, որ այդպիսի ծանր գնով է ձեռք բերած։ Իսկ սիրտն էլ ասում էր.

«Սակայն որքան գեղեցիկ ու հրապուրիչ բան կը լինի այդ չնաշխարհիկ զարդը, ինչպէս պատմում էր ծերունին»…

«Սպիտակ տառեղներ… —մտմտում էր իզոլդը՝ յիշելով ծերունու խօսքերը։ —Նրանց միսը ուտելու համար անպէտք է, դրա համար էլ ոչ-ոք չի դիպչում նըրանց… Իսկ երբ ձեռք բերուի փնջիկն ու մանրիկ-մանրիկ ադամանդներով զարդարուի, ճիշտ այն դուրս կը գայ, ինչ որ երազում ու փափագում էիս…։

Միքիչ յետոյ նրա աչքին պատկերացաւ ամեն բան՝ և մօտակայ գարնանը տեղի ունենալիք շքեղ տօնախմբութիւնը, և իրա նշանածը, և ծիւնի նման սպիտակ վերնազգեստը, և ծովի նման կապտագոյն թիկնոցը, և… մանրիկ ադամանդներով շողշողուն սպիտակ գլխազարդը…։

«Սպանել մի հատ, —շարունակեց իզոլդն իրա մըտքումը։ —միայն մէկ հատ»…։

Եւ նա փոքրառփոքր սկսեց հաշտուել սպանման տգեղ մտքի հետ։

Մի հատ թռչուն սպանելլը այլևս այնքան սոսկալի չթուաց, ինչպէս որ սկզբում թուացել էր նրան։

Եւ իզոլդի մտքովն անցաւ.


«Ի՞նչ հրաշալի բան կը լինի այդ հարսանեկան գըլխազարդը, ու ի՞նչպէս գոհ կը մնայ նշանածս, երբ նրա աչքում աւելի գեղեցիկ երևամ այդ չնաշխարհիկ գլխազարդով»…։

Իզոլդն այդպէս մտմտալով ինքնիրան հետ, հետ-

ըղհետէ աւելի ու աւելի ընկաւ մտքի ետևից:
Երկար մտատանջուելուց յետոյ վերջապէս վճռեց
իրա անելիքը:

Հէնց-որ առաւօտ եղաւ, իզոլդը կանչել տուաւ ծե-
րունուն և հրամայեց անմիջապէս ճանապարհ ընկնել:

— Բայց տես, — խստութեամբ պատուիրեց նրան իշ-
խանուհին, — հայրս չպէտք է իմանայ որ այդ զարդը
ձեռք բերելու համար պէտք է տառեղնիկ սպանուի:



* * *

արունն արդէն հասուէ-
հաս էր:

Կղզու ամբողջ ազգա-
բնակութիւնը՝ մի սիրտ
ու մի հոգի դարձած, ա-
մենայն եռանդով պատրաստութիւն էր տեսնում մօ-
տեցող ազգային տօնախմբութեան համար, բայց այս
անգամ նմանը դեռ չեղած տօնախմբութեան. որով-
հետև այդ ժողովրդական հանդէսի հետ միաժամանակ
պէտք է կատարուէր նաև իրանց բարի և սիրելի թա-
գաւորի աղջկայ հարսանիքը:

Ծերունի թագաւորի՝ ի-պատիւ իր սիրելի աղջկայ,
բարիք էր խոստանում ամենքին ու խնդրում՝ որ այդ
օրը սրտանց և անկեղծօրէն ուրախանան իրա հետ.

Եւ բարի թագաւորի այդ փափազը կատարվում էր
ճշտութեամբ. ամենքը ևս ուրախ էին արդէն:

Միայն իզոլդը չէր մասնակցում յատկապէս իրա-

համար կատարուող այդ ուրախութիւններին: Նա շատ
տիսուր էր և մտազբաղ:

Իշխանուհին արդէն զղջացել էր արածի վրայ և ան-
շափ ցաւում էր որ թոյլ էր տուել իրան անձնատուր
լինել գատարկ փառասիրութեան զգացմունքին: Բայց
արդէն ուշ էր այդ զղջալը. եղածը եղել-պլծել էր. այլ-
ևս անկարելի էր ուղղել արած սիսալը:

Իզոլդը թէպէտ շատ էր աշխատում չմտածել այդ
մասին, սակայն նրան չէր յաջողվում այդ:

Կղզին սկսեց հետզհետէ ծածկուել գարնան կանան-
չով. ծովը կատաղի չէր այլևս, այլ միայն ուրախ աղ-
մկում էր:

Ամեն կողմից սկսել էին գալ արքայազունները. սա-
կայն՝ զլխազարդի գնացող ծերունին դեռ չէր երևում:

Եւ այդ բանի համար իզոլդը գոհ էր: Նա արդէն
սկսել էր մտածել՝ թէ ինչով փոխարինէ զլխազարդը:

Ողջմամբ տեղ հասաւ նաև թագաւորազն Սագիրը
իր բազմաթիւ շքախմբով ու թանկագին ընծաներով:


Արդէն որոշուած էր հարսանիքի և ազգային տօ-
նախմբութեան օրը, որովհետև թէ հանդէսի և թէ հար-
սանիքի համար համարեա ամեն բան պատրաստ էր:

Հարսանիքի նախորդ իրիկունը հեռու տեղից եկող
մի նաւ մտաւ նաւահանգիստ և խարիսխ գցեց. իսկ մի
կարճ միջոցից յետոյ էլ պալատ եկաւ գլխազարդի
գնացող ծերունին: Նա խոնարհ զլուխ տուաւ իզոլդին
և լուռ մեկնեց նրան մի սովոր տփիկ:

Իզոլդը ևս լոռութեամբ վերցրեց տփիկը, բայց երբ
կափարիչը յետ տարաւ, զարմանքի ու հիացմունքի ճիշ
արձակեց:

— Ո՛, որպիսի գողտը... ինչ աննման բան...

Տփիկի յատակը պատած էր մոյզ թաւիշով, իսկ
վրան դրած չնաշխարհիկ զարդը՝ աղուամազի նման



քնքուշ և նոր եկած ձիւնի պէս սպիտակ:

Գլխազարդի վրայ տեղ-տեղ՝ հազիւ նշմարելի, փակցրած բազմաթիւ մանրիկ աղամանդներն այնպէս էին շողշողում, պէծին-պէծին անում, ինչպէս-որ ձիւնն է փայլում ու փելքստին տալիս արկի տակ:

Դժուար էր մի աւելի շքեղ բան երևակայել, որ այդպէս իսկութեամբ ներկայացնէր ընութեան քմահաճոյքի խաղերից մինը:

Գլխազարդը հէնց այն էր, ինչ որ իզոլդը երազել էր և երիտասարդական վառ երևակայութեամբ պատկերացրել իրան:

— Ո՞հ, ինչ գեղեցիկ է, — նորից բացականչեց նա հիացած. — որքան հրաշալի... և ինչքան էլ սիրուն է... :

Բայց իզոլդը՝ մի բան մտաբերելով յանկարծ տրխեց. նա մի բոպէ փակեց աչքերը, ապա բանալով՝ դիմեց ծերունուն և յուզուած ու դողացող ձայնով հարցրեց:

— Եւ դու...դու սպանեցիր տառեղնիկն:

— Այն, իշխանուհին ապրած կենայ, — պատասխանեց ծերունին անվրդով. — սպանեցի, որպէզի նրա գլխի վրայից պոկէի փետուրէ վնջիկը: Եւ պոկեցի ու տարայ մի մեծ քաղաք, ուր գիտեն ուկուց ու զանազան թանկագին քարերից այդպիսի գեղեցիկ զարդեր շինել: Ով տեսնում էր, մնում էր հիացած փետուրների նրբութեան ու գեղեցկութեան վրայ: Շատ երիտասարդ կանայք ու օրիորդներ, շատ հարուստ վաճառականներ և այլ դասակարդի ունկոր մարդիկ գալիս էին մօտս վնջիկը տեսնելու: Եւ դրանք ամենքն էլ՝ առասպեկական բարձր գին առաջարկելով, խնդրում-աղաչում էին որ ծախեմ իրանց վրայ, սակայն ոչ մի գնով ես չհամաձայնեցի, իշխանուհի:

— Շնորհակալ եմ, — կամաց շշնջաց իզոլդը:



Ռոկեզօծ սփիկը.

—Այդ մեծ բաղաքում շատ որոնելուց յետոյ, —խօսը շարունակեց ծերունին, —վերջապէս գտայ մի յայտնի և առաջնակարգ հմուտ վարպետ, որին պատմեցի ուզածդ, և ահա ինքդ տեսնում ես, իշխանուհի, թէ ինչ է պատրաստել նա և թէ որքան լաւ եմ ըմբռնել քո միտքը, —ասաց ծերունին և հպարտութեամբ մատնացոյց արաւ տփիկի մէջ զետեղած շողողուն գլխազարդը:

—Շնորհակալ եմ, —նորից ասաց իգոլդը և փակեց տփիկը:

Իգոլդի ձեռքերը դողում էին սաստիկ յուզմունքից:

* * *

Սիւս օրը անթիւ բազմութիւն հաւաքուեց պալատի առաջ հանդիսավայրում՝ նորապսակներին շնորհաւորելու:


Հանդիսականները՝ ձեռքներին բոնած կանանչ ոստու ծաղիկները օդում շարժելով սրտավին ողջունում էին երջանիկ զոյգին:

Ամեն կողմից լսվում էին բարեմաղթութիւններ.

—Ապրած կենայ մեր բարի թագաւորը... Կեցցէ մեր սիրելի իշխանուհին... Կեցցէ թագաւորազն Սագիրը... Կեցցեն շատ տարիներ....

Երկրի հնաւանդ սովորութեան համաձայն թագաւորը պէտք է բոնէր աղջկայ ձեռքը և ժողովրդի ներկայութեամբ տալով փեսային՝ օրհնէր երիտասարդ զոյգին:

Ահազին բազմութիւնը անհամբեր և մեծ հետաքրքրութեամբ այդ աւանդական արարողութեանն էր սպասում: Հէնցոր հօր ու աղջկան տեսան կոնաբրոնուկ, սքանչացումի ճիչ արձակեցին ու մնացին արձանացած, այնքան զեղեցիկ էր իգոլդը հարսանեկան զգես-



Հայրը աղջկայ ձեռքը տախս է փեսային:

տով։ Այդ բոպէին նա նմանում էր չորս կողմը թագաւորող ու ժպտող սիրուն գարնան։

—Կեցցէ... կեցցէ, —ձայնեցին ամենքը միաբերան։

Ծերունի թագաւորը աղջկայ ձեռքը տալով փեսային՝ ասաց։

—Օրնում եմ ձեզ, զաւակներս. բաղդաւոր լինիք, մի բարձի ծերանար. շատ ապրիք ձեր ժողովրդի օգուտի և բարօրութեան համար։

—Ամէն, —լուեց ամեն կողմից։

Երաժիշտներն սկսեցին նուագել. չորս կողմից լսելի եղան ուրախ, ցնծագին աղաղակներ ու սրտագին բարեմաղթութիւններ։

Հանդիսականներն սկսեցին մէկ-մէկ մօտենալ և շնորհաւորել նախ թագաւորին, ասելով՝

—Աչքդ լոյս, մեր բարի թագաւոր, և ապա դառնալով նորապսակներին։

—Երջանիկ զոյգ լինիք, —բացականչում էր և նրանց ոտերի տակ գցում ձեռքի կանանչ ոստն ու ծաղիկները, կամ զանազան խոտերից ու մամուռից հիւսած պըսակը. մէկ խօսքով՝ այն ամենը, որ ցանկալի գարունը պարգևել էր իրանց ծննդավայրին։

Հնչեցին փողերը. նորից լսուեցին ցնծագին ուրախութեան ձայները.... Եւ այդպէս շարունակուեց ուրախութիւնն ու կերուխումը ամբողջ երեք օր և երեք գիշեր։

Չորրորդ օրն սկսեցին պատրաստութիւն տեսնել՝ նորապսակներին ճանապարհ զցելու։

Բոլոր հանդիսականները՝ մեծ ու փոքր, տղամարդ թէ կինարմատ, միասին ուրախ երգելով առաջնորդեցին նորապսակներին դէպի նաւահանգիստ, ուր խարիսխ գցած սպասում էր արքայական զարդարուն նաւը։

Ուրախութիւնն ու կերուխումը նաւի վրայ ևս շա-

րունակուեց մինչև երեկոյ։

Մութն ընկնելուն պէս վառեցին նաւի վրայի և թէ նրա շուրջը կախոտուած գոյնզգոյն լապտերները, որոնք արտացոլալով ջրի մէջ, խաղում էին մեղմ ալիքների հետ։ Սյապէս էր թվում թէ նրանք ևս կամենում էին բարձրանալ նաւը՝ մասնակցելու ընդհանուրի ուրախութեանը։

Հարսներների բաղդից ծովն այդ երեկոյ սովորականից աւելի խաղաղ էր։

Գարնանային անամպ երկնակամարի վրայ հեզիկմեղմիկ փայլում էին լուսինն ու պայծառ աստղերը։

Նաւապետի նշանի վրայ բարձրացրին խարիսխը։

Նաւը երբ մեղմօրէն շարժուեց տեղից և ուղղուեց դէպի բաց ծովը,


—Բարի ճանապարհ, բարի ճանապարհ, —բացականչեց ծովեղրին կանգնած ժողովուրդը միաբերան։


Իսկ նորապսակները՝ թաշկինակնին փողփողելով օգում շնորհակալութիւն էին յայտնում իրանց ողջերթմաղթողներին։

Երբ արքայական նաւը՝ բոլոր առագաստները պարզած ու յաջողակ հողմից մղուած, առաջ սլանալով տարաւ թանկագին բեռը, ժողովուրդը՝ նախքան ցրուելը, բարոյական պարտք համարեց սրտագին շնորհակալութիւն յայտնել իրանց բարի թագաւորին։

Ծերունի թագաւորը որ մի տեսակ թմրութեան մէջ էր ընկել, ժողովրդի արտայայտած այդ անկեղծ շնորհակալութիւնից կենդանութիւն ստացաւ ու զգաց որ ինքը մենակ չի լինելու, այլ միւս զաւակների—իր սիրելի ժողովրդի հետ։

Եւ նա ուրախ ու գոհ սրտով վերադարձաւ պալատ։





Բ

յդ օրից տարիներ էին անցել:

Իզոլդն արդէն միքանի գաւակների մայր էր:

Այն երկիրը, ուր հարս գնաց իզոլդը, ամենեն նման չէր նրա հայրենիքին:

Նոր հայրենիքում երբէք ձիւն չէր գալիս. դաշտու անտառ, անդ ու անդաստան՝ տարին-տասներկու ամիս ակնապարար տեսարաններ էին ներկայացնում. իսկ տաք ու կաս-կապոյտ ծովը քնքուշ ծփանքով գնում էր ու գալիս, նորից յետ դառնում, բայց հետինհետ կրկին վերադառնում և իւրաքանչիւր վերադարձին քնքշաբար բաղխում ափերին, որոնք ծածկուած էին գինեւէտ այգիներով, պտղառատ պարտէզներով ու բուրաւէտ ծաղկոցներով:

Բացի գրանից նոր հայրենիքի ժողովուրդը աւելի ազատ էր ապրում. այդտեղ մարդիկ աւելի գոհ էին իրանց կենցաղից, քան հիւսիսում. Այդտեղ ծովը ևս շատ աւելի գեղեցիկ էր, աւելի հրապուրիչ, երկինքն աւելի պարզ, աստղերն աւելի պայծառ. իսկ թոշունների

երգը հնչում էին էլ աւելի ուրախ ու անհոգ:

Սակայն չնայելով այդ ազատութեան, երկրի բնական կախարդիչ գեղեցկութիւններին և թէ ընտանեկան կատարեալ բաղդաւորութեան, բայց ևայնպէս իզոլդը գոհ չէր. նրան ինչ-որ պակասում էր:

Նա շատ անհանգիստ էր. նա ոչ մի բանով չէր կարողանում սրտանց ուրախանալ, ո՛չ մի բանով չէր փարատվում նրա վիշտը, այլ քանի գնում՝ աւելանում էր և կապարի նման ճնշում նրա կուրծքը:

Ծերունի հօրը տեսնելու փափագին աւելացաւ նաև հայրենիքի կարօտը:

Եւ իզոլդի սիրտը, հոգին ու միտքը միացած իրար հետ՝ բուռն թափով ձգտում էին դէպի հայրն ու հայրենիքը:

Թագաւորագն Սագիրը երբ իմացաւ ամուսնու սրտի փափագը, ո՛չ-միայն չընդդիմացաւ, այլ ընդհակառակը՝ ամեն կերպ աշխատեց որ նա ըոպէ առաջ զնայ ծնողի ու հայրենիքի կարօտն առնի:

Եւ գարնան սկզբին իզոլդը ճանապարհ ընկաւ գէպի հօրանց տուն:

Իզոլդին հօրանց տանող նաւը քանի առաջ էր ընթանում, հողմն այնքան աւելի էր սաստկանում, երկինքն աւելի մթնում ու մոխրագոյն դառնում և հետզհետէ աւելի ու աւելի զգալի էր դառնում ցուրտը:

Եւ այդ շատ հասկանալի է. որովհետև իզոլդի ծնընդագայրում չէր վերջացել ձմեռը. Սառուցը նոր-նոր էր սկսել ճեղքուածներ տալ. իսկ ծովը դեռ ծածկուած էր ձիւնի հաստ շերտով: Սակայն չնայած այդ բանին՝ ծանօթ վայրերի տեսքից իզոլդի սիրտը թունդ ելաւ. նա ճշմարիտ ուրախութիւն զգաց և սկսեց հեշտութեամբ շնչել հայրենիքի կենսատու օդը:

Ծերունի թագաւորի ուրախութիւնն անչափ եղաւ,

երբ յանկարծ, անսպասելի կերպով տեսաւ իր սիրելի զաւակին:

—Ա՞հ, իմ սիրուն, իմ աննման զաւակս,—բացականչեց ծերունին և գիրկնառաւաղջկան.—ինչ անսպասելի ուրախութիւն ծերունի հօրդ համար...: Ես յոյս չունէի թէ նորից կ'արժանանամ քաղցը տեսութեանդ: Արդէն շատ եմ ծերացել. սկսել եմ շուտ-շուտ հիւանդանալ: Վախենում էի թէ մի գուցէ մեռնեմ առանց քեզ նորից տեսնելու երջանկութիւնն ունենալու...: Անոյշ զաւակս, ուրեմն առաջուայ նման էլի՞ սիրում ես ծերունի հայրիկդ...: Ասել է՝ չես մոռացել ինձ.

—Ա՛, սիրելի հայրիկ, ի՞նչ ես ասում. մի՞թէ կարելի է ծնողին մոռանալ, այն էլ քեզ պէս բարի ծնողին: —Իմ քաղցը, իմ անհւշ զաւակս....:

Եւ ամբողջ օրերով հայրը չէր հեռանում աղջկայ մօտից, նոյնիսկ գիշերների մեծ մասն էլ նստած նրա անկողնու մօտ, շարունակ հարցութիրձ էր անում, թէ ինչպէս է ապրել ամուսնու, նրա ծնողների հետ և առհասարակ գ՞ն է նոր կեանքից, և կամ թէ պատմում էր իրա մասին՝ իրա մենակութեան, իրա քաշած կարօտի մասին....:

Իզոլդը քնում էր այն սենեակում, ուր անց էր կացրել անհոգ մանկութիւնը:

Ամեն օր անկողին մտնելիս նա մտաքերում էր իր նախկին կեանքը—իրա մանկութեան, պատանեկութեան անգին ու անմոռանալի օրերը:

Այդ բաղցը յուշերից իզոլդի հոգին աւելի ու աւելի էր խաղաղվում: Նա հետզհետէ աւելի լաւ էր զգում իրան. թախիծը տեղի էր տալիս ուրախութեան, և նա դառնում էր նախկին ժպտուն, ուրախ ու ծիծաղկոտ րզոլդը:



* * *

Պարզնկայ լուսնեակ գիշեր էր:

Թէպէտ վազուց էր ինչ իզոլդը անկողին էր մըտել, բայց քունը մօտ չէր գալիս նրա սիրուն աչերին: Ուստի նա վեր կացաւ տեղից և գնաց դէպի այն լուսամուտը, որտեղից երեսում էին ձիւնապատ լեռները, ամեհի ապառաժներն ու հայրենի ծովը....:

«Շուտով այստեղ էլ գարուն կը լինի, —ժպտալով ասաց իզոլդը. —սառուցն արդէն հալ է ընկել....: Ապառաժները շուտով կը ծածկուեն մամուռով, իսկ դաշտերը՝ կանանչով»...

Եւ իզոլդը խորասուզուելով անցեալ բաղցը յիշողութիւնների մէջ, մտաքերեց հայրենի այն գարունը, որ ինքը վերջին անգամ տեսաւ, երբ նշանած աղջիկ էր. յիշեց նաև այն սառնամանիք գիշերը՝ այդ օրուայ նման պարզնկայ լուսնեակ գիշերը, երբ ինքը՝ էլի այդպէս լուսամտի առաջ կանգնած, դիտում էր շրջակայքն ու մտմտում հարսանեկան հագուստի մասին....:

«Զիւնի պէս սպիտակ վերնազգեստ... ծովի գոյնի նման կապտագոյն թիկնոց... սառնամանիքից գոյացած աստղ ու սլաքների պէս շողշողուն գլխազարդ»....


Իզոլդն այդ ամենը մտաքերելով ժպտաց:

«Ո՞րքան ջահէլ էի այն-ժամանակ ու ինչքան թեթեամիտ....: Ախ, մանաւանդ այն անսիրտ, այն անզութ ծերունին, որի խօսքերից հրապուրուելով այնքան յիմարացայ, որ սպանել տուի խեղճ տառեղնիկին»....

Նա էլի շատ ու շատ բան յիշեց անցեալից և այդ մտածմունքներով գնաց-մտաւ անկողին:

Միքիչ յետոյ նրա քունը տարաւ: Բայց մէկէլ յանկարծ իզոլդին այնպէս թուաց թէ մէկը գրդելով ուսը՝ զարթեցնում է իրան:

Իզոլդն աչքերը բաց է անում:



Տարեղները ոխտալի հայեացքով Իզոլդին էին նայում:

Հուսնի կաթնագոյն շողերից ամբողջ սենեակը ցերեկուայ նման լոյս էր:

Իզոլդի անկողնու մօտ երկու մեծ, սպիտակ թըռչուն իրանց խոշոր ու տիշրալի աչերով իզոլդին էին նայում:

Թոչուններից մէկի գլխին մի բարակ, նուրբ ու սլաքանման թելելից կազմուած սպիտակ փնջիկ կար, իսկ միւսի կտուցի մէջ աստղանման երկու կարմիք ծաղիկ, որոնց միջուկը սև էր ածուխի պէս:

Իզորդի սիրտը դող ընկաւ. Նա իսկոյն վեր թռաւ, նստեց տեղի մէջ և վախեցած աչքերով սկսեց դիտել թոչուններին:

Տառեղներից մինը՝ կտուցով բռնած ծաղիկները գցելով իզոլդի գոգը, ասաց.

— Թագաւորի աղջիկ, ահա, վերցրու այդ ծաղիկները, որ մեր քոյր ու եղբայրների արիւնից են բուսել: Մենք յատկապէս քեզ համար բերինք այդ ծաղիկները, իշխանուհի:

Իզոլդը առանց ձայն-ծպըտուն հանելու, տարուբերվում էր երկիւղի ու տարակուսանքի մէջ:

— Մեզ համար ապրում էինք ազատ ու ապահով, — խօսքը շարունակեց տառեղնիկը. — ոչ-ոք վնաս չէր տալիս մեզ, ինչպէս և մենք չէինք վնասում ոչ-ոքի: Շատ կարելի է թէ մենք ամենքն մինչև հիմա էլ ապրելիս լինէինք ազատ ու ապահով, եթէ դու, թագաւորի աղջիկ, քմահաճոյքիդ բաւականութիւն տալու համար չպատուիրէիր այն անգութ մարդուն՝ սպանել մեզանից մէկին, որպէսզի նրա գլխի փետուրէ փնջիկով զարդարէիր գլուխդ: Այդ փնջիկը միայն գարնանն է դուրս գալիս մեր գլխին, այսինքն հէնց այն-ժամանակ, երբ սկսում ենք մեր բները վերանորոգել, որ ձու ածենք ու թուխս նստենք: Ուրեմն այդ փնջիկը հարսանեկան-

գլխազարդ է նաև մեզ համար, որովհետև մենք էլ մեր ուրախութիւնները, մեր զուարձութիւններն ունինք: Արդեօք դու այդ գիտէի՞ր, իշխանուհի....

Իզուղը մնացել էր լուռ ու գլխակոր նստած ինչպէս ամօթահար դատապարտուած:

Թագաւորի աղջիկ, դու առաջինն եղար որ պատուիրեցիր բարբարոսաբար յափշտակել մեր հարսանեկան գլխազարդը, որպէսզի ունեցածդ բաւականութիւնների թիւը մէկով էլ աւելանար, էլ չմտածելով որ զրանով պիտի վնասես և սզի մէջ գցես ուրիշներին:

Երբ սպանել տուիր մեզանից մէկին, ահա այդ դըքաղդ օրից սկսած մեծ-մեծ քաղաքներից սկսեցին որսորդներ գալ և սպանել մեզ հարիւրներով ու հազարներով.... Մենք ստիպուած եղանը ինքնապաշպանութեան դիմել.... Շատ աշխատեցինք, ամեն հնար գործ գրինք, որպէսզի մեր գոյութիւնը փրկելու մի ելք գտնենք և ապահովենք մեր ցեղը իսպառ ջնջուելուց, սակայն մեր ոյժերը անչափ անհաւասար էին:

Մեր թշնամիների թիւը իւրաքանչիւր գարնան աւելի ու աւելի բազմանում էր, իսկ մեր թիւը զգալի կերպով պակասում, ուստի մեր գոյութեանն սպանացող վտանգը աւելի մեծացաւ: Արդեօք դու այդ գիտե՞ս, թագաւորի աղջիկ:

Իզուղը դողում էր ուսի պէս. նա կամենում էր խօսել, բայց չէր կարողանում. լեզուն կապուել էր.

— Ասացի որ ապրում էինք ազատ, որեէ վտանգից ապահով ու հանգիստ, բայց դու պատճառ եղար մեր ազատութիւնը վերացնելու. դու վատ օրինակ տուիր չար մարդկանց, որոնք գալով մեզ մօտ, սկսեցին անգիտուն ոչնչացնել մեզ.... ինչու, թագաւորի աղջիկ: Զէ՞որ դու թէ սիրուն ես և թէ շատ բան ունէիր՝ ուզածիդ պէս զարդարուելու հարսանիքիդ: Ի՞նչ վնաս

կը լինէր քեզ, եթէ մի զլխազարդ պակաս կամ ուրիշ կերպ լինէր շինուած: Ինչպէս տեսնում ես՝ քո վատ օրինակով մեր ամենքիս դժբաղդութեան պատճառ դարձար: Բայց ամենից կոկծալին այն է, թագաւորի աղջիկ, որ մեզ սպանում էին յատկապէս այս-ժամանակ, երբ քաղցր յոյսերով մեր բներն էինք շինելիս լինում կամ եղածները կարկատում, վերանորոգում և կամ արդէն ձագեր հանած՝ նրանց կերակրելու հոգսով էինք լինում զբաղուած: Երբ չար մարդկանց հարուածներից մահացու վէրք ստացած վայր էինք ընկնում, նրանք՝ առանց խղճի խայթ զգալու, անտարբերօրէն մօտենում էին մեզ և գլխներից պոկոտում մեր հարսանեկան միակ զարդը: Իսկ մեր որբ մնացած ձագերը մնալով անտէր ու անպաշտպան, օրերով քաղցած ու ծարաւ, սովամահ էին լինում տասնեակ հազարներով: Արդեօք դու այդ մասին մտածել ես, թագաւորի աղջիկ:


Տառեղները՝ այդ սոսկալի հարցը տալիս շեշտակի նայում էին իզուղի աչքերին:

— Այսօր սպանեցին մեր վերջին ցեղակիցներին... հիմա մեր ցեղն սպառուած է.... Բոլոր տառեղներից միայն երկուսս ենք կենդան մնացել և մենք թուանքեկանք, որ քեզ հետներս տանենք այնտեղ, թագաւորի աղջիկ, և ցոյց տանք քեզ պճնասիրութեանդ համար կատարուած չարիբի ցաւալի հետևանքը: Մեր քոյր ու եղբայրների անմեղ արիւնը դեռ չի սառել, նրանց տաք դիակները դեռ փոռուած են գետնին.... Արի, թագաւորի աղջիկ, թուշնք-գնանք, որպէսզի ինքդ քո աչքով տեսնես ամեն բան, որպէսզի գոնէ սրանից յետոյ թէ ինքդ զգուշանաս և թէ ուրիշներին զգուշացնես այդպիսի անգութ արարքներից: Թող մեր մահը բաւական համարուի և ուրիշների ազատութիւնը գոնէ անբոնաբարելի մնայ այսուհետեւ.... Այդ ծաղիկները որ

հիմա քեզ տուի, զարմանալի յատկութիւն ունին... : Վեր առ. մէկ ձեռքովդ բոնիր ծաղիկներից մինը, միւս ձեռքովդ էլ՝ միւսը:

Իզոլդը՝ հնազանդուելով այդ հեղինակաւոր ձայնին, երբ մի ձեռքով վերցրեց ծաղիկներից մինը, զգաց որ թևեր բուսան մէջըն. իսկ միւս ձեռքով էլ երբ վերցրեց միւս ծաղիկը, իսկոյն անտեսանելի դարձաւ:

— Ուրեմն հիմա թռչենք-գնանք, միաբերան ասացին տառեղները:



անկարծ սաստիկ հողմ
բարձրացաւ,

Հեռուից ծովի աղ-
մկալից ձայներ էին
լսվում. Քամին շարու-
նակ վզզում էր և սոս-
կումն ազդող ձայներ
հանում. ծիածանը

կարմրին էր տալիս,

ամպը որոտում սաստկութեամբ, ապա հետզհետէ
բոլորովին խաղաղուեց եղանակը:

— Թագաւորի աղջիկ, — ասացին տառեղները. — նայ-
իր ներքեում երևացող մեծ քաղաքին. Այդ քաղաքը
աշխարհիս կենդրոնն է:

Իզոլդը նայեց ներքև և տեսաւ միլիօնաւոր ճրագ-
ներով լուսավառուած մի մեծ ու ընդարձակ քաղաք:

Մեր ճանապարհորդները, որոնք աներեոյթ էին ու-

* *

րիշների համար, ներքև իջնելով անցկացան քաղաքի մի-
ջով: Մեծ-մեծ ու լայն-լայն բազմամարդ փողոցներով
անցուղարձ անողները՝ իրար դիպչելով, մէկը միւսից
առաջ ընկնելով շտապում էին զանազան ուղղութեամբ:
Այս ու այն կողմով արագ-արագ սլանում էին բազմա-
թիւ կառքեր. լսելի էին ուրախ խօսակցութեան ձայ-
ներ, բարձրածայն ծիծաղ, երգ, նուազածութիւն...: Ան-
հոգ ու անգործ մարդիկ խանութների առաջ կանգնած՝
իրար հրելով ու հրմշտելով, աշքները չորս արած՝ ցան-
կանում էին աւելի մօտիկից տեսնել մանրիկ ադամանդ-
ներով զարդարուած սպիտակ ու քնքուշ փետուրները,
որոնք դրուած էին ներսը մոյզ թաւշապատ տփիկների
մէջ և դարսուած՝ անտեսանելի պայծառ լուսով ողողուն,
մեծ-մեծ լուսամուտների ապակէ դարակների վրայ:

— Ո՛, ինչ աննման բաներ... և նրան էլ զեղեցիկ
են, — բացականչում էին զարդասէր կանայք ու օրիորդ-
ները և ներս մտնելով խանութ ու իրար ձեռքից խըլ-
խլելով թռչունների փետուրներից պատրաստած կանացի
զարդերը, պահանջած գինը վճարում էին անխօս և գոհ
սրտով վերադառնում իրանց տները:

Իսկ Իզոլդը՝ տեսնելով այդ ամենը, մտքումն ասում
էր.

«Այդ հօ իմ գլխազարդն է»:

— Տեսնում ես, թագաւորի աղջիկ, — շշնջացին տա-
ռեղները Իզոլդի ականջին. — տեսնում ես՝ նրբան յաջո-
ղակ բան ես մտածել պճատսէր կանանց և օրիորդների
համար, որոնցից շատ շատերը՝ մի հասարակ վիայլուն
զարդ ունենալու տեսչից մղուած, պատրաստ են մո-
ռանալ ամեն բան՝ և խիղճ, և նոյնիսկ բարի անուն...:
Լաւ տես քո հնարած գիւտը և տես թէ ինչ ուրախու-
թիւն է պատճառում պճատսէր թեթեամիտ կանանց...:
Բայց աւելի լաւ է որ թռչենք-գնանք և դու քու սեպ-

հական աչքով տեսնես ամեն ինչ, որ աւելի պարզ լինի քեզ համար, թէ երբեմն ինչ ծանր գնով են ձեռք բեր- վում այդ ու նման զարդարանքները:

Եղանակը կրկին փոխուեց դէպի վատը. բարձրացաւ սաստիկ մըրիկ. Ամեն ինչ սկսեց աղմկել:

Խաւարը պատեց չորս կողմը:

Իզոլդն զգում էր որ մի աներևոյթ զօրութեամբ ինքը արագաբար ոլանում է միշտ առաջ ու առաջ՝ անց- նելով անթափանցելի խաւարի, կատաղի մըրիկի և որոտ ու կայծակ տեղացող ամպերի միջից:

Հուսաբացին երբ երկնքի մի ծայրից երևաց արեգա- կը, մեր ճամբորդները իրանցից ներքև տեսան մի ծաղ- կաւէտ հովիտ, որի միջից անցնում էր մի վարար գետ:

Ահա այդտեղ կանգ առան և սկսեցին կամաց-կա- մաց վայր իջնել:

Գարնան հրաշալի առաւօտ էր:

Հովիտի և հսկայ ծառերի ծաղիկներից հարբեցնող անոյշ հոտ էր բուրում:

Սակայն այդ ծաղիկների նման ծաղիկ իզոլդը չէր տեսել ոչ մի տեղ:

Նոր ծլած, ակնապարար կանանչ խոտով ծածկուած գետինը կարծես մի հսկայական կանաչ գորգ լինէր փոռուած:

Գետեզրի ամբողջ երկարութեամբ բուսած եղէգ- ները՝ զեփիւռից օրօրուելուց իրար բսուելով, այն- պիսի անոյշ ծայներ էին հանում, որ ասես թէ անտե- սանելի յաւերժահարսների քաղցր խմբերգ լինէր:

Ամեն կողմից հրաշալի գարնան համ ու հետ էր զգացվում:

—Թագաւորի աղջիկ, ահա այս է մեր ծննդավայրը, — ասացին տառեղները. — Տեսնում ես՝ ինչպէս զեղեցիկ է մեր գարունը: Ականջ դիր թէ որպիսի քնքշութեամբ է

կարկաչում ջուրը, ինչ քաղցր են սրվսըվում եղեգնե- րը....: Լաւ տես մեր անուշաբոյր ալուան-ալուան ծաղիկ- ները....: Տես՝ մեր արևը փոխանակ այրելու, ասես թէ մեղմ զեփիւռի հետ խօսքը մէկ արած՝ զովացնում է կենդան արարածներին: Այնպէս չէ, թագաւորի աղջիկ, մեր գարունը շատ զեղեցիկ է:

— Այն, շատ զեղեցիկ է, — վերջապէս կարողացաւ խօսել իզոլդը. — Ես իմ օրումը այսպիսի հրաշալի գա- րուն չեմ տեսած:

— Իսկ այնտեղ, եղէգնուտում, կամ նրանից այն կողմը, ծաղիկների ու խոտերի մէջ, ինչպէս նաև միւս կողմը՝ ծառերի տակ երևացող կոյտերն ինչ են: Նայիր և ասա:

Իզոլդն աչք ածելով մատնանշած տեղերը, պատաս- խանեց:

— Բամբակի կոյտեր:

— Ո՞չ, ոչ, չարաչար սխալվում ես, թագաւորի աղ- ջիկ, — նկատեցին տառեղները. — Նրանք ոչ թէ բամբակի կոյտեր են, այլ մեր սպանուած ցեղակիցների դիակ- ները: Եւ գիտեմ ինչներ են սպանել նրանց. — որպէսզի նրանց գլխի փետուրէ փնջիկը պոկեն-տանեն՝ պճա- սէր կանանց ու օրիորդների գլուխները զարդարեն....:

Անտանելի էր խեղճ իզոլդի դրութիւնը. բաւական չէ որ ամօթից չէր կարողանում տառեղների աչքերին նայել, այլ ուր էլ որ զարձնում էր հայեացքը, միմիայն արիւնաթաթախ զլուխներով սպիտակ դիակներ էր տես- նում....:

«Աստուած իմ, ինչ սարսափելի է» — ասում էր մտքի մէջ հէք աղջիկը:

Խոտերի ու ծաղիկների մէջ այս ու այն կողմը թափ- թը փուած հազարաւոր տառեղներից շատերն արդէն վաղուց փշել էին շունչները, շատերը հէնց նոր էին

սառել, սակայն շատերն էլ դեռ կիսամեռ, վերջին շընչում կլափին էին տալիս—բացուխուփ էին անում իրանց երկար կտուցնին և լուռ տանջվում:

Իզոլդին այնպէս էր թվում թէ բոլոր տառեղները իրան են նայում յանդիմանօրէն:

«Օ՛, և այս բոլոր դժբաղդութիւնները... իմ մի դատարկ, վաղանցուկ բաւականութեանս համար»....

— Թագաւորի աղջիկ, — նորից խօսեցին տառեղները, — ինքդ էլ ես տեսնում, թէ որքան թանգ արժէ քո գլխագարդը...: Բաւական չէ որ մեզ սպանում էին, այլև մեր անմեղ ձագուկները մեռնում էին սովից, որի հետևանքը եղաւ մեր ցեղի սպառուելը....: Գիտե՞ս, հասկանում ես, թագաւորի աղջիկ, թէ ինչ ասել է մի ամբողջ ցեղի խպառ ջնջուելը աշխարհի երեսից, և այն էլ... մի հատ գլխագարդի համար:

Իզոլդը այլևս չգիտէր իրա անելիքը. նա ոչ-միայն չէր համարձակվում տառեղներին նայել՝ գոնէ մի բերան անկեղծօրէն ներողութիւն խնդրելու իր կատարած սխալի համար, այլև դժուարանում էր մանաւանդ իրա շուրջը դիտել. որովհետև ուր աչքը դարձնում էր, միայն դիակ, դիակ, դիակ էր տեսնում և քարուքանդ արած աւերակ բներ....:

Եւ սակայն սաստիկ տենչում էր Իզոլդը մի այլ կենդան արարած տեսնելու, մի ուրիշ ձայն լսելու, քան տառեղների յանդիմանութիւնները, որոնցից արիւնը սառչում էր երակների մէջ:

— Շատ էլ հեռու չէ այն-ժամանակը, — շարունակեց տառեղներից մինը, — երբ այստեղ ևս գուարթ կեանքի ու անկեղծ ուրախութեան ճիշեր էին լսվում ամեն կողմից....: Բայց այդ ամենն անցան անդարձ, անդառնալի կերպով. ուրախ ճիշերը տեղի տուին վշտի և լաց ու կոծի հառաջանքներին: Իսկ հիմա ոչ-միայն չի լլս-

վում ուրախ ճիշ, այլ, աւաղ, մի հատ ողբացող էլ չկայ, որ դառնագին սգայ մեր ցեղի անդարձ կորուստը.... Թագաւորի աղջիկ, արդեօք լսում ես որևէ այլ ձայն, տեսնում ես այստեղ որևէ այլ բան, բացի մահից....:


Տառեղների ամեն-մի խօսքը սուր սլաքների պէս ծակծկում էին խեղճ աղջկայ սիրտը: Տեսածը իրաթեթեամտութեան զոհերն էին միայն, լսածը՝ ամենադառն ու արդարացի յանդիմանութիւններ:


Եւ իզոլդը միայն հիմա հասկացաւ, որ ոչ-թէ մի հատ թռչունի կեանք է խլուել, ինչպէս ասաց անգութ ծերունին, այլ մի ամբողջ ցեղ է խպառ ոչնչացել:

Ի՞նչ դառն գիտակցութիւն:

Իզոլդը ամեն կերպ ճիգն թափեց, որ դուրս գայ այդ անտանելի դրութիւնից. նա սկսեց դէսուղէն ընկնել, մազերը փետել ու գլխին վայ տալ. իսկ երբ յուսահատարար սկսեց նաև թերել թափահարել, յանկարծ սարսափելի արագութեամբ առաջ սլացաւ մենակ, առանց ուղեկիցների. բայց այս անգամ ոչ թէ դէպի վեր, այլ գահավիժում էր դէպի ներքեն, դէպի մի անյատակ մութ անդունդ...

Նրա աչքերը մթնեցին, սիրտն սկսեց ուժգին բարախել, շունչը կրկնուեց, և նա ուշաթափ վայր ընկաւ:





* * *

զոլզը երբ ուշքի եկաւ,
երկար միջոց չէր կա-
րողանում խելքը գլուխը
հաւաքել այն սարսա-
փից, որ պատել էր նրա
հոգուն:

Նրան այնպէս էր թը-
էլի տեսնում է բազմերանդ ծաղիկները և զգում նրանց
անոյշ բուրմունքը...:

Եւ մէկէլ յանկարծ ազատ շունչ քաշելով բացա-
կանչեց.

«Ո՞հ, այս երազ էր... բայց ինչ սարսափելի երազ»:
Երբ իզոլին անկողնուց վեր կենալով հազաւ շորերը,
այնպէս էր թվում թէ երկար ժամանակ հիւանդ է ե-
ղել՝ այնքան գունատ էր:

Իզոլին սկսեց պալատի մէջ դէսուդէն շրջել՝ չգի-
տենալով ինչ անելիքը. չէր իմանում ուր գնար կամ
ուր փախչէր այն ծանր մտքերից ու մաշող յուշերից,
որոնք պաշարել էին իրան:

Նա ամաչում էր թէ ինքն իրանից և թէ մանաւանդ
հօրից, որից ծածուկ գործ էր բռնել, և ուրեմն խաբել
էր նրան....

Եւ մէկէլ յանկարծ իզոլին սկսեց անհանգստութիւն

զգալ ամուսնու, զաւակների համար ու մի ըոպէ իրան
երեակայեց ոչ-թէ արքայադուստր կամ զահաժառան-
գի ամուսին, այլ սպիտակ տառեղնիկ, որի ձագերը՝
մնալով անմայր որբեր, կոտորվում են քաղց ու ծարա-
ւից...:

«Ո՞հ, սարսափելի է, սարսափելի... — շշնջաց հէք
աղջիկը:

Երկիւղից ու սաստիկ յուզմունքից նա հազիւ էր
պահում իրան ոտքի վրայ:

— Հայրիկ, ուզում եմ վերադառնամ տուն, դիմեց
նա հօրը:

— Ինչու այսպէս յանկարծ. Ի՞նչ է եղել... Գոյնդ ին-
չու է այդպէս թռած, հոգիս. Դու տիսուր ես, — գորո-
վանքով հարցը հայրը:

— Երեխաների համար շատ եմ անհանգիստ. շարու-
նակ տանջվում եմ դառն մտքերից և դողում նրանց
համար. Աղաչում եմ՝ անմիջապէս հրամայիր պատրաս-
տել նաւը. ցանկանում եմ ըոպէ առաջ տուն հասնել
առանց ուշանալու:

Ապա իզոլին անկեղծօրէն խոստովանեց հօրը իր ա-
րած դժբաղդ սիսալը և միհառմի պատմեց տեսած երազը
և թէ այն հոգեկան տանջանքները, որ հիմա քաշում է
ինքը:

Ծերունի հայրը լսելով աղջկայ պատմութիւնը, խոր-
հըրդաւոր կերպով գլուխը շարժեց ու ասաց.

— Ուրեմն այդպէս, հա...: Բայց ես երբէք, երբէք չէի
կարող կարծել, որ դու ընդունակ կը լինիս ինձանից ծա-
ծուկ գործեր կատարել, որ նոյնն է թէ խաբել ինձ. Խա-
բել ինձ՝ որ այնպէս սիրում էի քեզ ու վստահ էի խո-
հեմութեանդ վրայ...: Ավսոն, և ինչպէս հաւատում էի
քեզ. Մէծ յանցանք էր քո կողմից՝ դէպի քեզ տա-
ծածս սէրը, ունեցածս վստահութիւնն ու հաւատը ի-

չարը գործ դնել...: Կանացի անմիտ զարդերի համար սպիտակ տառեղներին ոչնչացնելը ես էլ էի իմացել և սրտիս խորքում նախատել այդ անգթութիւնն անողներին. սակայն ի՞նչպէս կարող էի մտքովս անգամ անցկացնել, որ այդպիսի տմարդի արարքի սկզբնապատճառը իմ հարազատը, իմ սիրելի աղջիկն է: Ուրեմն երազդ սուտ չէ. դու տեսել ես բռն իրականութիւնը:

—Ուրեմն բոլոր տեսածս ուղիղ է, —սարսափահար ու խելագարի պէս հարցը իզոլդը:

—Բոլորովին ուղիղ, —տիրութեամբ պատասխանեց հայրը: —Վատ մարդիկ իրանց թեթևամիտ ու անգութ վարմունքով, —որպիսին է մի ամբողջ ցեղի իսպառ ջընջումը, —ստորացնում են մարդկային արժանապատռութիւնը, որին բարձր պահելը ամենքիս համար թանգ պէտք է լինի:

—Ո՛, հրբան մեծ, հրբան ծանր է յանցանքս, —բացականչեց իզոլդը և փարուեց հօր վզովը: —Աղաչում եմ, հայր, սովորեցրած՝ թէ ինչ կերպ և ինչպէս ուղեմ յանցանքս:

—Ի՞նչ որ արդէն տեղի է ունեցել, եղել-պրծել է, աղջիկս: Կան սխաներ, կան յանցանքներ, որոնց ուղղելն այլևս անկարելի է. քո գործած սխալը, կամ աւելի ճիշտը՝ յանցանքը այդ տեսակիցն է և անցեալի նման անդառնալի: Զի՞-որ դու խելօք ու խոհեմ էիր, էլ ինչու լսեցիր հրապուրողի խօսքերին...: Ի՞նչեւ. սխալ կամ յանցանք գործողի և թէ նրա մօտիկ անձանց համար միակ մխիթարութիւնն այն է միայն, որ գիտակցօրէն ու անկեղծ զղջումը կատարելապէս մաքրում է սխալուղի հոգին և նրան զգուշացնում՝ նորանոր սխաներ անելուց:

—Հայրիկ-ջան, երդւում եմ քո ալիքներով, —յուղուած բացականչեց իզոլդը, —որ այսուհետեւ իմ ողջ

կեանքում այլևս ոչ մի վատ բան չեմ անիլ, ոչ մի պախարակելի գործ չեմ կատարիլ, որպէսզի ոչ-ոքի վնաս տուած չլինիմ:

—Այդ խոստումդ շատ քիչ է, սիրելիս: Բաւական չէ որ վատ բան չես անիլ, պախարակելի գործ չես կատարիլ, որովհետեւ դրանով միայն հոգեկան հանգստութիւն կ'ունենամ՝ առանց ուրիշներին մի բանով օգնած լինելու...: Այն, բաւական չէ, որ ոչ-ոքի վնաս չտաս, դրանով միայն շատ չարիքից պաշտպանուած կը լինիս: այլ անհրաժեշտ է որ միշտ և շարունակ բարիք անես և առաքինի գործեր կատարես: Որովհետեւ միմիայն այդպէս անելով դու կարող ես նորից երջանիկ զգալ քեզ, —ասաց հայրը և դողդոջուն ձեռքով սկսեց քնքշաբար շոյել աղջկայ շպանակագոյն, մետաքսանման փափուկ վարսերը:

Սիրելի ծնողի այդ սովոր փաղաքշանքը կենդանացրին իզոլդին և խաղաղութիւն տուին նրա ամբոխուած հոգուն:

—Սիրելիդ իմ իզոլդ, —նորից խօսեց հայրը. —աշխարհս շատ գեղեցիկ է, բայց վատ ու չար մարդիկ պատճառ են դարձել նրանում վիշտ ու տառապանք գոյանալուն: Եւ ուրեմն վատութիւն անելով մէկին կամ վնասելով թէկուզ մի ամենափոքր անվնաս արարածին, մենք այդպիսով միայն շատացրած կը լինիք վատ ու չար մարդկանցից գոյութիւն առած վիշտն ու տառապանքը. մինչդեռ մարդու իսկական կոչումը պէտք է լինի շարունակ ձգտել՝ որ մեր գեղեցիկ աշխարհում գոյութիւն ունեցող վիշտն ու տառապանքը իսպառ չքանան, կամ գոնէ շատ պակասեն:

Հետևեալ առաւօտեան հայրը ճանապարհ գցեց սիրելի աղջկան:

Այս անգամ իզոլդը լուս էր և լուրջ: Նաւի տախ-

տակամածի վրայ կանգնած՝ նա համեմատեց ներկան անցեալի հետ. յիշեց թէ առաջին անգամ ինչպէս ճանապահ զցեցին իրան դէպի նոր հայրենիք. Նրա յիշուղութեան մէջ պարզ պատկերացաւ գոյնզգոյն լապտերներով ու գեղեցիկ ծաղիկներով զարդարուած նաւը. Նա մտաբերեց թէ ինչպէս ինքը՝ հմայուած իրա գեղեցկութիւնով ու բաղդաւորութիւնով, անհոգ թոչնակի նման սլանում էր դէպի նոր հայրենիք և մտածում միմիայն իրա մասին և ենթադրում թէ բոլոր մարդիկ ևս պարտաւոր են միմիայն իրա մասին մտածել, իրա հետ ուրախանալ:


Իզոլդը յիշեց այդ ամենը և ապա ինքն իրան մըտաց.

«Իսկ այժմ. այժմ ինչի՞ մասին պէտք է մտածեմ. Այս-ժամանակ երազել եմ միմիայն իմ սեպհական բաղդաւորութեան համար. իսկ հիմա ես պարտաւոր եմ ոչ-միայն երազել, այլև մտածել ու աշխատել թէ մերձաւորներիս և թէ ընդհանուր մարդկութեան բաղդաւորութեան համար՝ գործ դնելով ամեն պատուաբեր միջոց»....

«Հիմա, — շարունակեց նա իրա մտմտուքը, — վերադառնում եմ իմ նոր հայրենիք, ուր ես թողել եմ ընտանիք և ժողովուրդ. ժողովուրդ՝ որից միշտ անբաժան է մաշող հոգսն ու վիշտը...: Երդվում եմ՝ որ տեղ հասնելու պէս պէտք է թողնեմ բոլոր անմիտ ու դատարկ գուարճութիւններս ու նուիրուեմ տառապող ժողովրդին և օգնեմ նրան՝ ինչով որ կարող եմ...»:

Այս անգամ ծերունի հայրը՝ աղջկան ճանապարհ գցելիս ասաց.

— Աննման զաւակս, ով իմանայ՝ մէկէլ կ'արժանանամնք իրար տեսութեան. Սակայն այն գթասրտութիւնն ու կարեկցութիւնը, որոնցով այժմ լի է հոգիդ, հաս-



Իզոլդը մտածում է ապագայ անելիքի մասին:

տատ է որ երջանկութիւն են տալու քեզ, և հէնց այդ
էլ լինելու է իմ մխիթարութիւնս ծերութեանս մէջ:
Ուրեմն միշտ խոհեմ և հաստատամիտ եղիր՝ բարի ձըգ-
տումներդ իրականացնելու համար...: Բարի ճանապարհ,
ծերութեանս սփոփանք... Բարեիր սիրելի վեսայիս.
համբոյրս գառնուկներիդ՝ իրանց անճանանչ բայց ի-
րանց սիրող, իրանց համար աղօթող ու ամեն բարիք
ցանկացող պապիկից...:

Ծերունի թագաւորը նաւից իջնելուն պէս խարիսխը
բարձրացրին և նաւը դիմեց դէպի բաց ծովն ու առաջ
ոլացաւ:

Իսկ իզոլդը՝ կանգնած նաւեզրին, լուռ ու մտախոհ
դիտում էր հեռուն: Դիտում էր և սրտի հրճուանքով
մտածում՝ բայց հչ-թէ իրա, այլ ժողովրդի լաւ ապա-
գայի մասին, այն նոր ու արդիւնաւէտ կեանքի մա-
սին, որին բարի գործերով իրականութիւն տալը իրա
կեանքի նպատակը պէտք է լինէր այնուհետեւ:

Եւ նա փափագում էր օր առաջ տեղ համնել, որ-
պէսզի մտքում կազմած ծրագիրը կեանքի մէջ իրա-
կանացնելուն ձեռնարկի ըոպէ առաջ:



ՀՆԿԵՐՈՎԹԻԱՆԱ հրատարակովթիւնները

1. Հ. Ռոզլէս. Բէն Հուբ. հ. I. թարգմ. անդ. Փ. Վարդանեան.	— 75
2. Նոյն, հ. II.	— 75
3. Եիրվանղաղէ, Արտիստալ.	— 25
4. Մուրացան, Գէորգ Մարզպետունի, պատմական վէպ	1 — 20
5. Փուկովսկի. Քնած ալքայադուստրը, պատկերագ. հէքեաթ. փոխաղը. Աթ. Խնկոյեան.	— 15
6. Ստ. Տէր-Աւետիքեան. Պատմւածքներ	— 50
7. Նար-Դու. Մահը, վէպ.	1 — 20
8. Ե. Ռուբակին. Ստորերկրեայ կրակ. պատ.	— 50
9. Զ. Դիկկենս. Դաւիթ Կոպպէրֆիլդ. պատկ. վէպ. մասն առաջին, անգլ. թարգմ. Փ. Վարդանեան	— 75
10. Նոյն, մասն երկրորդ	— 75
11. Նոյն, մասն երրորդ	— 75
12. Եիրվանղաղէ. Երկերի ժողովածու, հատ. IV	1 — 50
13. Դ. Դեմիրճեան. Բանաստեղծութիւններ	— 50
14. Ասկէ Աղջիկը, թարգմ. Լ. Մելիք-Աղամեան	— 7
15. Ակ Բօղատ, թարգմ. Ս. Թորոսեան	— 15
16. Ստեփաննոս Նազարեանի Երկերը, հատոր I	1 — 50
17. Սպիտակ տառեղնիկը, փոխ. օր. Ն. Գրիգորեան	— 20

ՀԱՆՐԱՅԻՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

1. Գաբրիէլ Դ'Անունցիօ. Ջիօկօնղա. ողբ. 5 ար. Փրանս. թարգմ. Ս. Յակոբեան.	
2. Իլիա Ճաւճաւաձէ. Մուրացկանի պատմածը. վրաց. թարգմ. Տ. Փիրումեան:	
3. Ա. Ահարոնեան. Աստծու կրակը:	
4—5. Իւշկիչ. Թագաւոր. ոռւս. թարգմ. Յ. Յովհաննիսեան:	
6. Յ. Մալխասեան. Յանցանքը:	
7. Սէյրի. Ծիլ ու Մաղիկ:	
8—9. Կոմս Ա. Կ. Տօլստօյ. Խօսնն Ահեղի մահը. ողբ. 5 ար., ոռւս. թարգմ. Տ. Յովհաննիսեան:	
10. Անտոն Չեխով. Պատմածքներ. ոռւս. թարգմ. Ռ. Խան-Ազատ:	
11—12. Ա. Ս. Գրիբաեկով, Խելքից պատուհաս, կոմ չորս գործ. ոտանաւորով. թարգմ. Լ. Մանուէլիսեանի:	
13. Լորդ Բայրոն. Մանֆրէդ. Անգլ. ընագրից թարգմ. Տիրայր վարդ.	
14. Գիւի-ղը-Մոպասան. I ճարպագունդը, II Զարդը. Փրանս. թարգմ. Ռ. Խան-Ազատ:	
15. Վ. Վալաղեան. Բժիշկը. դրամա 3 գործ.	
16. 17. Կուուտ Համսուն. Պան. Լէյտընսոնտ թոմաս Գլանի թղթերից. գերմ. թարգմ. Աւ. Խսահակեան:	
18. Մարգար. Վէպիկներ.	
19. Թերուս կնոջ խոստովանքը, տ. Ն. Աթայեանի.	
20. Ֆեօդօր Խօսնովիչ արքան, ողբ. 5 ար., թարգմ. Տ. Յովհաննիսեան	
21, 22, 23. Հերման Զուղերման. Հոգսը, գերմ. թարգմ. Գ. Ալթունեան ԻհրԱԲԱՆԶիի՛ ՀԱՄԱՐԸ 15 կ.	

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

1. Զարաբաստիկ թուղթը, Ստ. Տէր-Աւետիքեան	— 8
2. Նահապետական տուն, Մովսէս Ղոկստեանց	— 5
3. Գործակատար Մարտիրոսը, Ս. Մ.-Շահնազարեան	— 7

ԳԻՒՆԻ 1; 20 կլղ.



